ուով. հայոց ՉՀ թուականի վերջում և Քրիստոսի 1322/3 թուին արդէն նա կապեր ունէր հաստատած Զաքարիա Ծործորեցու և Յոհան Երզնկացու հետ, որ այդ ժամանակ նստում էր Արտազի Ծործորի վանքում. Երզնկացին այդ ժամանակ լատիներէնից թարգմանում է «տր. Բարդուղիմէոսի հեղահոգի քահանայ(ի) եւ յոյժ գիտնականի» օգնութեամբ Թովմա Ակուինացու Եօթն խորհրդոց գիրքը(*)։ Յոհան Քռնեցին ի՞նչպէս կապուեց Բարդուղիմէոսի հետ, չգիտենք. ըստ Զամչեանի(**), որպէս թէ հէնց Եսային է ուղարկել Նորան Մարաղա, տեղեկանալու, թէ «ո՞բպիսի իցէ վարդապետութի. սորա», ապա յարելով Նորան, համոզում է գալ, բնակուել Քռնայում, իւր աշակերտներին էլ նոյնը յորդորելով։ Այս վերջին իրողութիւնը հաստատւում է Քռնացի Յակոբ վարդապետի խօսքերով, որ նա կցում է Բարդուղիմէոսի քարոզգրքի յիշատակարանին և յայտնում, թէ Յովհաննէս վարդապետը մեծ նեղութեամբ բերել է «զվերոգրել. այրն ՅՍ զար. Բարդուղիմէոս և բնակեցոյց ի գեղս Քռնա». գիւղի առաջնորդ պարոն Գորգի ձեռքով շինել է տալիս եօթանասուն օրուայ ընթացքում Քռնայի Ս. Աստուածածինը. նաև «զբզմս. յորդորեաց ի միաբանութի. սբ. եկեղեցոյն Հռոմայ . . . և բերեալ զընկերակիցս իւր արար կցորդ այսմ մեծի բարութեցս.»(*)։ Այս խօսքերն աւելի պարզւում է մի համառօտ յիշատակարանից. «Յոհան Քռնեցին մեծին Եսայեայ աշակերտք էին և այսչափ վարդապետովս դարձեր են ի Քռանդաց դաւանութի. Մարգարէ վրդպտ. ի գեղջէն Օձոպայ. Յակոբ վրդպտ. ի գիւղաքաղաքէն Գառնւոյ. Հայրպտ. վրդպտ. Է. աղբիւր գեղջէ. Յոհան վրդպտ. ի Մուանա գեղջէ Սիմէօն վրդպտ. ի Բասեն գաւառէ. Ներսէս վրդպտ. ի գաւառէն Տարօնոյ. Առաքել և Իէլ. վրդպ. ի գաւառէն Արտազու. Գրիգոր վրդպտ. ի յԱպրակունիս գեղջէ. Կոստանդին և Յոհէս. վրդպտք. ի յաշխարհէն (նշանագրով) Կիլիկոյ. Սիմէօն վրդպտ. ի Խչէն. գաւէ.»(**)։ Մշակուած



Պատկեր 227.

(*) Ձեռ. Էջմ. № 505/560 (Կար. 493), 204ա. (Ցաւել. Բ. 84, պատկ. 222)։

(**) Պատմութիւն Հայոց, III. 326։ Բայց այդպիսի բովանդակութեամբ ազբիւր մինչև այժմ չէ գտնուած. հաւանօրէն, ի նկատի ունի Բարդուղիմէոսի Քարոզգրքի յիշատակարանը։

(*) Ձեռ. Էջմ. № 689 նժ.։

(**) Ձեռ. Էջմ. № 2195/2180, 321ա. Ձեռագրի այն մասը, որտեղից հանուած է այս ցանկը, թուական չունի։ Տես նաև Ձեռ. Էջմ. № 1364/1361, 341ա.։ № 717, 55ա.։ Այս ցանկից երկուսը մեզ ծանօթ են արդէն, Մարգարէ Օձոպեցու համար Դանիէլ Կուքեցու ձեռքով արտագրուած տեսանք Յոհան Քռնեցու թարգմանած «Գիրք զժոխոց»ը, հաւանօրէն սա է. «մենամարտիկ բաբունին Մարգարէ», որ